ՀՍԽՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՍԽՀ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի
1936 թ. մայիսի 13-ի հրամանը

ՊԵՏՀՐԱՏ 1936 ՅԵՐԵՎԱՆ

Գատ. խմբ.՝ Ա. Վարդապետյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Գեհարքաի տպարան, Երևան, II Գնունի, № 4
Գլավլիտի լիազոր Կ. 2132. Գրավեր 670
Հրատ. 3741, Տիրաժ 4000

30 JAN 2018

ՀՐԱՄԱՆ

ՀԱԽՀ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ՝ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում տարեվերջի քննությունները անցկացնելու վերաբերյալ հրահանգը հաստատել:

2. Առաջարկել բոլոր լուսաժիններին հրահանգն ստանալուն պես բացատրական աշխատանք տանել դպրոցների դիրեկտորների և վարիչների, ուսումնական մասի վարիչների և ուսուցիչների մեջ՝ դպրոցում քննությունները անցկացնելու կարգի վերաբերյալ:

Առաջարկել բոլոր դպրոցների դիրեկտորներին և վարիչներին՝ ծանոթացնել աշակերտներին ու նրանց ծնողներին դպրոցներում քննությունները անցկացնելու քնությի ու կարգի հետ:

3. Դպրոցների դիրեկտորներին և վարիչներին—ուսումնական տարին փակել՝ դպրոցական տոն կազմակերպելով: Տոնին հրավիրել աշակերտների ծնողներին, տեղի կուսակցական, կոմյերիտական ու խորհրդային կազմակերպությունների և դպրոցի հետ կապված հիմնարկների ներկայացուցիչներին: Տոնին դպրոցների դիրեկտորներն ու վարիչները պետք է զեկուցեն դպրոցի տարեկան գործունեության մասին և նշեն դպրոցի լավագույն աշակերտներին, ինչպես նաև լավագույն ուսուցիչներին:

Դպրոցական տոնին կազմակերպել աշակերտների յելույթներ—գեղարվեստական յերկերի արտասանություններ, ինսցենիրովկաներ, յերգ, յերաժշտություն, ֆիզկուլտ-վարժություններ և այլն:

Լուսավորության ժողովրդական կոմիսար՝
Ա. ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ՏԱՐՐԱԿԱՆ, ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. *Տարեվերջին կազմակերպվող քննությունները աշակերտների գիտելիքների, կարողությունների և ունակությունների տարեկան յեզրափակիչ ստուգումն են հանդիսանում:*

Միմիայն քննությունների արդյունքները չեն կարող վճռական լինել՝ յուրաքանչյուր առանձին աշակերտի առաջադիմության աստիճանն անցած դասընթացից վորոշելու համար. դրա համար էլ աշակերտների գիտելիքների տարեկան գնահատականները դուրս բերելիս քննությունների արդյունքները պետք է լրացվեն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում աշակերտների առաջադիմության վերաբերյալ հաշվառման տվյալներով:

2. *Դպրոցների դիրեկտորներն ու վարիչները և ուսումնական մասի վարիչները պարտավոր են անձամբ մասնակցել քննություններին՝ ապահովելով նրանց անցկացման նորմալ ընթացքը:*

Տարեվերջի քննությունները չպետք է վերածվեն հին ձևի քննությունների:

Դպրոցների դիրեկտորներն ու վարիչները և վողջ մանկավարժական կազմը առանձնապես պետք է զգուշանան նաև այն անթույլատրելի փորձերից, յերբ առանձնապես դժվար ու «խճճված» հարցեր տալով՝ դիտմամբ «կտրում են» աշակերտներին, ինչպես նաև դիտավորյալ կերպով և «հեշտ ու թեթև» հարցեր տալով՝ բարձր գնահատականներ են նշանակում:

Դպրոցների դիրեկտորներն ու վարիչները և մանկավարժական կազմը, ինչպես նաև յուրաքանչյուր ուսուցիչ իր առարկայից, ամբողջապես պատասխանատու յեն անցկացվող քննությունների վորակի և աշակերտների գիտելիքների գնահատականների ճշտության համար:

4
1-35239գր

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

3. *Յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա վերջին քառորդի ընթացքում պետք է աշակերտների հետ կրկնի ընթացիկ ուսումնական տարում իր առարկայից անցած նյութը:*

4. *Անցածի կրկնությունը կատարվում է դասի ժամանակ, ինչպես նաև տանը, ուսուցչի տված ցուցումներով, ընդ վորում պետք է խուսափել ավելորդ ծանրաբեռնումից:*

5. *Մանկավարժական կոլեկտիվը, ներգրավելով կոմյերիտական, պիոներական և աշակերտական կազմակերպությունները, պետք է աշակերտներին բացատրի քննությունների նշանակությունը՝ վորպես տարվա ընթացքում յուրաքանչյուր աշակերտի ստացած գիտելիքների, կարողությունների և ունակությունների ստուգման միջոցի:*

6. *Դպրոցների դիրեկտորներն ու վարիչները պետք է քննություններից առաջ աշակերտների ծնողներին իրազեկ դարձնեն քննությունների խնդիրներին:*

7. *Դպրոցների դիրեկտորներին և վարիչներին իրավունք է վերապահվում հետաձգել աշնանը այն աշակերտների քննությունը, վորոնք տարվա ընթացքում հարգելի պատճառով շատ դասեր են բաց թողել:*

8. *Առանձնապես հիվանդ, թուլակազմ յերեխաները, յեթե տարվա ընթացքում համապատասխան առարկաներից միջակից վոչ ցածր առաջադիմություն են ունեցել, դպրոցի դիրեկտորի (վարիչի) հայեցողությամբ կարող են հաջորդ դասարան փոխադրվել առանց քննության:*

9. Դպրոցների դիրեկտորներին և վարիչներին իրավունք է վերապահվում թույլ առաջադիմություն ունեցող առանձին աշակերտների քննությունները հետաձգել աշնանը, իսկ առանձնապես վոչ առաջադեմ աշակերտներին թողնել նույն դասարանում նրանց քննության չենթարկելով:

Ցերեք առարկայից (յերկուսը հիմնական՝ քննության յենթակա, մեկը՝ մյուս առարկաներից) «վատ», կամ «չատ վատ» գնահատական ունեցող աշակերտին իրավունք վերապահել յերկրորդ անգամ քննվելու (աշնանը). իսկ քննության յենթակա յերեք և ավելի առարկաներից «վատ» կամ «չատ վատ» գնահատական ունեցողներին թողնել նույն դասարանում:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Քննությունները պետք է կատարվեն աշակերտներին դասարանից դասարան փոխադրելիս և դպրոցն ավարտելիս:

Ծանոթություն.— Դպրոցի նախապատրաստական, առաջին, յերկրորդ և յերրորդ դասարաններում քննություններ չեն անցկացվում: Այդ դասարանների աշակերտները փոխադրվում կամ մնում են նույն դասարանում՝ համաձայն իրենց գիտելիքների տարեկան գնահատականների (թվանշանների):

11. Քննության վոչ յենթակա առարկաներից վատ գնահատականներ ունեցող աշակերտն ևս այդ առարկաներից քննության և յենթարկվում:

Դպրոցների դիրեկտորներն ու վարիչները պարտավոր են այս քննություններին ևս անհրաժեշտ ժամանակ հատկացնել քննությունների դասացուցակում:

12. Քննությունները պետք է տեղի ունենան՝ 4-րդ դասարանում—մայիսի 28-ից մինչև հունիսը 8-ը ներառյալ. 5 և 6-րդ դասարաններում՝ մայիսի 28-ից

մինչև հունիսի 8-ը ներառյալ. 7-րդ դասարանում՝ մայիսի 28-ից մինչև հունիսի 9-ը ներառյալ. 8, 9 և 10-րդ դասարաններում՝ մայիսի 31-ից մինչև հունիսի 17-ը ներառյալ:

Ծանոթություն.— Հանգստի որերին քննություններ անցկացնելն արգելվում է:

13. Բոլոր ուսումնական պարապմունքները վերջանում են տվյալ դասարանում քննություններն սկսելիս: Քննությունների որերի միջև ընկած ժամանակամիջոցում թույլատրվում է աշակերտների համար կազմակերպել վոչ պարտադիր ժամանց (ֆիզիկական վարժություններ, խմբական յերգ, պարեր և խաղեր):

14. Քննություններ անց են կացվում 4-րդ դասարանում—հայոց և ռուսաց լեզուներից (գրավոր և բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), բնագիտությունից և աշխարհագրությունից (բանավոր): Տարրական դպրոցի 4-րդ դասարանի քննությունները ավարտական են համարվում:

5-րդ դասարանում—հայոց և ռուսաց լեզուներից (գրավոր և բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), պատմությունից և աշխարհագրությունից (բանավոր):

6-րդ դասարանում— հայոց լեզվից ու գրականությունից և ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), թվաբանությունից (գրավոր և բանավոր), բուսաբանությունից և աշխարհագրությունից (բանավոր):

7-րդ դասարանում—հայոց լեզվից ու գրականությունից և ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր), յերկրաչափությունից, պատմությունից, ֆիզիկայից, կենդանաբանությունից, աշխարհագրությունից, աշխատանքից (վերջինս վոչ լրիվ միջն. դպրոցում). (բոլորն էլ բանավոր): Վոչ լրիվ միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում քննություններն ավարտական են համարվում:

8-րդ դասարանում—հայոց լեզվից ու գրականու-

թյունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր և բանավոր), յերկրաչափությունից, պատմությունից, մարդու անատոմիայից և ֆիզիոլոգիայից, աշխատանքից (բոլորն եվ բանավոր):

9-րդ դասարանում—հայոց լեզվից ու գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից ու գրականությունից (գրավոր և բանավոր), յերկրաչափությունից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր), յեռանկյունաչափությունից, ֆիզիկայից, եվոլյուցիոն ուսմունքից, աշխարհագրությունից (բոլորն եվ բանավոր):

10-րդ դասարանում—հայոց լեզվից ու գրականությունից (գրավոր և բանավոր), ռուսաց լեզվից ու գրականությունից (գրավոր և բանավոր), հանրահաշվից (գրավոր և բանավոր), յերկրաչափությունից (գրավոր և բանավոր), յեռանկյունաչափությունից, ֆիզիկայից, քիմիայից, պատմությունից, ոտար լեզվից, աշխատանքից (բոլորն եվ բանավոր):

15. Քննությունների ժամանակ գիտելիքների ըստուգումը կատարվում է ուսումնական տարվա ընթացքում անցած նյութի սահմաններում:

16. Քննություններն անց են կացվում ուսմասվարի կազմած և դիրեկտորի հաստատած հատուկ դասացուցակով:

Դասացուցակը կազմելիս պետք է ղեկավարվել հետևյալով.

ա) Քննության յենթակա այն առարկաները, որոնք աշակերտից զգալի լարվածություն են պահանջում, պետք է մեջ ընդ մեջ հաջորդեն ավելի հեշտ առարկաներին:

բ) Մեկ օրում պետք է անցկացնել միայն մեկ քննություն (բանավոր կամ գրավոր):

գ) Յուրաքանչյուր գրավոր քննության համար հատկացվում է՝ 4-րդ դասարանում—մեկ ժամ, 5—

7-րդ դասարաններում—2 ժամից վոչ ավելի, 8—10-րդ դասարաններում—3 ժամից վոչ ավելի:

դ) Բանավոր քննություններին 4—7-րդ դասարաններում հատկացվում է որական 4 ուսումնական ժամից վոչ ավելի, 8—10 դասարաններում՝ որական 5 ժամից վոչ ավելի:

Ծանոթություն.— Առարկայի քննությունը (բանավոր կամ գրավոր) պետք է վերջանա մեկ որում: Հարկ յեղած դեպքում, բանավոր քննություններ կատարելիս, կարելի յե դասարանը բաժանել յերկու մասի (որինակ՝ դասարանի մի մասը քննության է յենթարկվում առավոտյան ժամը 9-ից, իսկ մյուս մասը՝ ցերեկվա 2-ից):

ե) Դասամիջոցները պարտադիր են յուրաքանչյուր ակադեմիական ժամից հետո, միայն բանավոր քննությունների ժամանակ:

17. Քննություններից յերեք որ առաջ դպրոցում պետք է փակցնել քննությունների դասացուցակը, իսկ աշակերտներին պետք է ծանոթացնել քննությունների կարգին:

18. Արգելվում է աշակերտներին տալ այսպես կոչված հատուկ «քննությունների ծրագրեր», «հարցացուցակ», նախապես վորոշված հարցեր և այլն:

Քննություններն անցկացնելիս պետք է ապահովվի աշակերտների գիտելիքների ստուգումն ըստ ծրագրի տարբեր բաժինների:

Այս նպատակով ուսուցիչը պետք է դասագրքի հիման վրա կազմի ուսումնական տարվա ընթացքում անցած թեմաների և յենթաթեմաների հաջորդական ու մանրամասն ցուցակը, ինչպես նաև մի շարք առաջարկներ, որինակներ և խնդիրներ բանավոր քննությունների համար:

Յուրաքանչյուր առարկայի թեմաների և յենթաթեմաների, որինակների և խնդիրների այդ ցուցակը հաստատում է դպրոցի դիրեկտորը (վարիչը) և այդ

ցուցակը պահվում է միայն ուսուցչի մոտ:

Քննությունների ժամանակ աշակերտին տրվում է մեկ կամ մի քանի թեմա կամ յենթաթեմա. արտոյ ամենևին չի արգելվում աշակերտին հարցեր տալ նաև անցած դասընթացի մյուս մասերից:

Քննություն կատարող ուսուցիչը պետք է գրի առնի, թե աշակերտին ի՞նչ թեմա յե տրված և այդ թեմայից դուրս ի՞նչ հարցեր են առաջադրված նրան:

10-րդ դասարանի ավարտական քննությունների ժամանակ այս մասին արձանագրություն է կազմվում:

19. Քննությունների ժամանակ հայոց և ռուսաց լեզուների գրավոր աշխատանքները պետք է բաղկացած լինեն՝ 4, 5, 6 և 7-րդ դասարաններում—թելադրությունից, 8. 9 և 10 դասարաններում—թելադրությունից և շարադրությունից՝ անցած դասընթացի սահմաններում: Թելադրության և շարադրության համար 8, 9 և 10-րդ դասարաններում հատկացվում են քննությունների առանձին որեր, այսինքն՝ չի թույլատրվում մեկ որում գրավոր քննություն կատարել թե՛ թելադրությունից և թե՛ շարադրությունից:

Հայոց և ռուսաց լեզուների շարադրությունների համար տրվում է 2-ական թեմա, վորոնցից մեկն ընտրելու իրավունքը վերապահվում է իրենց՝ աշակերտներին: Հայոց լեզվի և գրականության բանավոր քննությունը 6, 7, 8, 9 և 10-րդ դասարաններում կատարվում է միաժամանակ, բայց թե՛ լեզվի և թե՛ գրականության գնահատականները տրվում են առանձին-առանձին: Ռուսաց լեզվի և գրականության բանավոր քննությունը 9 և 10-րդ դասարաններում կատարվում է միաժամանակ, բայց գնահատականները տրվում են լեզվին և գրականությանն առանձին-առանձին:

Մաթեմատիկայի քննությունների ժամանակ գրավոր աշխատանքները պետք է բաղկացած լինեն՝ 4, 5 և 6-րդ դասարաններում—թվաբանական մի խնդրից և յերկու որինակից, 7 և 8-րդ դասարաններում՝ հանրահաշվական մի խնդրից և յերկու որինակից, 9-րդ դասարանում՝ հանրահաշվական մի խնդրից ու յերկու որինակից և յերկրաչափական յերկու խնդրից (մեկը հաշվարկման, մյուսը՝ կառուցման վերաբերյալ). 10-րդ դասարանում՝ հանրահաշվական մի խնդրից ու յերկու որինակից և յերկրաչափական մի խնդրից՝ յեռանկյունաչափության կիրառումով:

Մաթեմատիկայից խնդիրներն ու որինակները տրվում են յերկու վարիանտով:

Աշխատանքի դիտելիքների և ունակությունների ստուգումը կատարվում է արհեստանոցում՝ գործնական պարապմունքների ձևով: Այս պարապմունքներին զուգընթաց աշակերտներին համառոտակի հարցեր պետք է տրվեն տեխնոլոգիայի բնագավառից:

Գրավոր քննությունները, վորպես կանոն, կատարվում են բանավոր քննություններից առաջ: Տվյալ առարկայի գրավոր և բանավոր քննությունների միջև ընկած ժամանակամիջոցը 3—4 որից ավելի չպետք է լինի: Գրավոր աշխատանքներն ուսուցիչը պետք է ստուգի բանավոր քննություններից առաջ: Բացի տրվյալ առարկան դասավանդող ուսուցչից, գրավոր աշխատանքներն ստուգում է նաև նույն դպրոցի մի այլ ուսուցիչ, վորին նշանակում է դպրոցի դիրեկտորը (վարիչը):

Գրավոր աշխատանքի վերջնական գնահատականը (թվանշանը) տալիս է տվյալ առարկայի դասատուն, բացառությամբ 10-րդ դասարանի, վորի վերջնական գնահատականը տալիս է դպրոցի դիրեկտորը:

20. Յուրաքանչյուր առարկայի և դասարանի (բացառությամբ 10-րդ դասարանի) գրավոր քննությունների թեմաներն ու բնագրերը պատրաստում է տվյալ առարկայի դասատուն և հաստատում է դիրեկտորը (վարիչը): Շրջանային և քաղաքային լուսաժիններին

արգելվում է դպրոցներին պարտադիր և միասիպ ատուգողական աշխատանքներ տալ:

Հայոց և ռուսաց լեզուների ու մաթեմատիկայի գրավոր աշխատանքների թեմաները, վոչ լրիվ միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանի և միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի համար, սահմանում է Լուսժողկոմատը և լուսբաժինների միջոցով ուղարկում է դպրոցների դիրեկտորներին՝ գրավոր քննություններն սկսելուց 2—3 որ առաջ: Դպրոցների դիրեկտորներն այս թեմաները դասատուներին են հանձնում քննությունների որը: Ցերևանում և Լենինականում այս թեմաները սահմանում են քաղաքային լուսբաժինները:

21· Քննությունները կատարվում են տվորական դասարանական պայմաններում՝ տվյալ դասարանի բոլոր աշակերտների կամ նրանց կեսի ներկայությամբ, յեթե դասարանը յերկու մասի յե բաժանված:

22· Քննությունը կատարում է տվյալ առարկայի դասատուն: Բանավոր և գրավոր քննություններին անպայմանորեն ներկա յեն լինում, բացի առարկայի դասատուից, լուսբաժնի ներկայացուցիչը և դպրոցի դիրեկտորի (վարիչի) նշանակումով՝ տվյալ դպրոցի նույն կամ հարակից առարկայի դասատուներից մեկը:

Քննություններին ներկա յեղող՝ լուսբաժնի ներկայացուցիչը և դասատու-ընթերական չեն միջամտում քննությունների ընթացքին: Նրանք իրենց դիտողությունները հաղորդում են դպրոցի դիրեկտորին (վարիչին): Աշակերտների գիտելիքների գնահատականը վերաբերվում է համապատասխան առարկայի դասատուին և դպրոցի դիրեկտորին (վարիչին):

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՑԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

23· Աշակերտը մի դասարանից մյուս դասարանն է փոխադրվում կամ ավարտում է դպրոցը, յեթե վոչ մի առարկայից «միջակից» ցածր գնահատական չունի:

24· Տարեկան ընդհանուր գնահատականը (թվանշանը) վորոշվում է ուս· տարվա բոլոր քառորդներում աշակերտների ստացած գնահատականների (թվանշանների) և քննությունների ժամանակ ստացած գնահատականների (թվանշանների) հիման վրա:

Ծանոթություն.— Հայոց լեզվի և գրականության ու ռուսաց լեզվի ու գրականության տարեկան ընդհանուր գնահատականներում՝ առանձնացվում են գրավոր և բանավոր պատասխանների գնահատականները: Մնացած բոլոր առարկաներից մի գնահատական է տրվում:

25· Ուսումնական տարին ավարտելուց հետո աշակերտին տրվում է·

ա) Վկայագիր (атестат) (Լուսժողկոմատի սահմանած ձևով)—միջնակարգ դպրոցն ավարտողներին:

բ) Վկայական՝ տարրական կամ վոչ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտողներին:

գ) Փոխադրման վկայականներ, գիտելիքների և վարքի գնահատականների մատնանշումով, դասարանից-դասարան փոխադրվող բոլոր աշակերտներին:

Այն աշակերտները, վորոնք հիմնական առարկաների մեծ մասից ստացել են տարեկան ընդհանուր «գերազանց» գնահատական, մնացած առարկաներից՝ «լավից» վոչ պակաս գնահատական, իսկ վարքից՝ «գերազանց» գնահատական,— պարգևատրվում են գովասանագրերով:

26· Քննությունների ժամանակ՝ քննություններին յենթակա և քննությունների մեջ մտնող առարկաներից վատ գնահատականներ ստացող աշակերտներին թույլատրվում է 2-րդ անգամ (աշնանը) քննվելու (միայն հրահանգի 9-րդ կետի սահմաններում): Քննություն կատարվում է միայն այն առարկաներից, վորոնցից աշակերտները վատ գնահատականներ ունեն:

27· Աշնանային քննությունները կատարվում են ոգոստոսի 20-25-ը:

Այդ քննություններին պետք է ներկա լինեն դրպրոցի դիրեկտորի (վարիչի) նշանակումով՝ համապատասխան առարկայի դասատուները: Մնացած դեպքերում կրկնողական քննությունները կատարվում են սույն հրահանգում մատնանշված կարգով:

28. Այն աշակերտները, որոնք կրկնողական քննություններից հետո վերջնական ընդհանուր գնահատականի ժամանակ «վատ» կամ «չատ վատ» գնահատական են ստանում, նույնիսկ մի հիմնական քննության յենթակա առարկայից, մնում են նույն դասարանում:

29. Պայմանական փոխադրումներ չեն թույլատրվում:

30. Ցերբորդ տարին դասարանում թողնել չի թույլատրվում: Ցերկրորդ տարի մնացող այն աշակերտները, որոնք վորևե առարկայից կրկնողական քննությունը չեն բռնում, արձակվում են դպրոցից: Նրանց տրվում է տեղեկանք, թե ի՛նչ առարկաներ են անցել դպրոցում և վո՛ր առարկաներից են դասընթացը յուրացրել:

Շրջանային և քաղաքային յուսաժիները պարտավոր են միջոցներ ձեռք առնել այդպիսի աշակերտներին ոժանդակ դպրոցներում տեղավորելու, ֆարդորձուներում, պրոֆ. դասընթացներում և այլն:

31. Տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցների այն աշակերտներին, որոնք կրկնողական քննություններ ունեն և այս կամ այն պատճառով այլ դպրոց են տեղափոխվում, տրվում են անհրաժեշտ տեղեկանքներ: Կրկնողական քննություններն այդ աշակերտները տալիս են այն դպրոցում, ուր տեղափոխվում են:

ՀՍԽՀ ՎՈՉ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

32. Տվյալ հրահանգը վերաբերում է նաև ՀՍԽՀ տերիտորիայի վրա գտնվող վոչ հայկական տարրական, վոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներին, հետևյալ փոփոխություններով.

ա) Այն բոլոր դեպքերում, ուր խոսվում է հայոց լեզվի քննությունների մասին (15, 20, 21, 26-րդ կետերը), վոչ հայկական դպրոցներում այդ ընդունել մայրենի լեզվի մասին:

ԾԱՆՈՒԹՅՈՒՆ.—Ռուսական դպրոցներում հայոց լեզվից, մյուս վոչ հայկական դպրոցներում՝ հայոց և ռուսաց լեզուներից աշակերտները քննության են յենթարկվում այն կարգով ու ծավալով, ինչ կարգով ու ծավալով հայկական դպրոցներում, ռուսաց լեզվից:

բ) Վոչ հայկական դպրոցներում քննություններն ավելի սույն հրահանգում նշված ժամկետներից յերկու որ առաջ:

ՀՀ Ազգային գրադարան
NL0977545

7 МАЯ. 1936
ԳԻՆԸ 25 կոպ.
384
1
3523

ИНСТРУКЦИЯ

о проведении проверочных испытаний в начальной, неполной средней и средней школе.